



Ճ. ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 2

ՀԻՆԳԵԱՐԹԻ Թ

5 ՅՈՒՆԻԱՐ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱԻԱՌԱՑ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍՈՂԾԱՆԻ	
Բեկան	50 ՂԸ	Տարեկան	54 ՂԸ	Տարեկան	42 Ֆր.
Վեցամսեայ	25 ,	Վեցամսեայ	27 ,	Վեցամսեայ	6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՑ ԵՒ ԸՆԿ

ՍԵՐՈՒՆԱՆԻՍՏԱՆԻ

ՄԷ Ն ՏԼԻԼԻ ԺՍՄՍՑՈՑՑՆԵՐՈՒ, ՇԳԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՂԱՐԵՂԻՆՈՑ

Կ. Պոլիս, ձեռքով Պոլիսի խանին տակ, Թիւ 16

Մասնատրապէս կը խնդրուի ուղադրութիւն լնել ՍԱՐԳԻՍՕՑ անունը կեղծող կարգ մը նորիւրի ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՑ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ ԲԷ՝ Կ. Պոլիս, եւ ԲԷ՝ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին զոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստանադէսին մէջ ամենեւնի բարձր պարգէնին արժանացած են:


Հատոր 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Մ. Ասաճորյան) شرکت مکتبیه مطبعه سی باب عالی جاده سنده نومبر ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆ Զ. ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հասկսի քիւ 52



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի , ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

մեքենան լաւագոյն է . աոյն մեքենան ամենէն կատարեւ լագործուածը ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՍԻՆԿԵՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ՌԵՐՍ.

- (1. Մեծ փողոց , Պօն Մարշէի դէմ , թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .

ԿԱՒԱԹԱ

- (1. Սինկէր խան , Թիւնէլի ետեւը .
- (2. Գարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ .

ՊԱԼԱՏ

- (1. Սուլթան համալ .
- (2. Սուլթան Պէյազիտ , Թրամվէյի կայարանին դէմ , թիւ 13 .

ՍԱԻՒՏԱՐ

Չարչը Պօյու , թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնագիտէր զաւտուեալ թոյր ֆաղսֆներու մեջ :

Սինկէրի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
343 կրկին , Տիւղօղլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԹ 4860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ



ԿԵՆՏՐՈՆԻ ՃԻԻՂ

Դրամագրութիւն եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԿ

ՀԻՐԵՆԶԻ ՃԻԻՂ

Դրամագրութիւն եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԿ



ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք և
կարասիք :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առաքատանաւի վրայ :

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պրիս , Ալեանաք խան , թիւ 11—16 :

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիւզօր ներկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Ա. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 2

ՀԻՆԳՇԱԲԹԻ

5 ՅՈՒՆՈՒՍԻ 1906

ԲՈՎԱՆԳԱՊՈԹԻՆ

Կղերը եւ աշխարհային դասակարգը եկեղեցիին մէջ (Խմբագրական). — Տ. : Բանաստեղծն եւ իր երգ (Վշտակցական). — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ : Պարզ խօսքեր (Քաղկեդոնի կրթական բուրասանը). — ՍԻՄԷՈՆ ՇԵՐՈՒՆԻ : Կաղանդի տոթիւ (Ֆանթեզի). ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ : Բրոնիկ (Դուք մեջքն) : Բրոնիկ (Պոնմառչէն եւ կիները — Նուերներու փսոթիլը — Պսուղները եւ սսամոսները — Աղփասախնամը — Էրիկ կնկան ֆոնքոսքներ, սարեմոսի տոթիւ). — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Հանրագիտակի թերթիկը : Զուարճալիք : Շաբթուան յուրեր :

ԿՂԵՐԸ ԵՒ ԱՇԽԱՐՀԱՅԻՆ

ԴԱՍԱԿԱՐԳԸ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ

Հոգեւոր իշխանութիւնը ի՞նչ ազդեցութիւն պիտի ունենայ եկեղեցիին մէջ, եւ աշխարհական դասակարգը՝ որ եկեղեցի կը յաճախէ՝ ի՞նչքան յարգանք պիտի տա՞մ է եկեղեցական իշխանութեան հանդէպ :

Խնդիր մըն է սա, զոր լուծած է Կաթողիկ եւ Օրթոտոքս եկեղեցիին : Կաթողիկ եկեղեցիներուն մէջ մասնաւոր պաշտօնեաներ ալ կան, Սիւրս կոչուած, որոնք յատուկ համազգեստով եւ իրաւասութեան գաւազանով կը շրջին եկեղեցիին մէջ, հոգեւոր հօտին պատկառանքը դիտելու եւ պատշաճեցնելու զայն ընկալելու կանոններուն եւ վայելչութեան պահանջումներուն համեմատ : Այս

խնդիրը առարկութիւն չի վերցնելու կաթողիկ եկեղեցիին մէջ, ուր կոմսը և գրքունիին հասարակ անհատի մը նման հաւասարապէս կը համակերպին դիտողութեանց, և կամ սովորութիւնը զիրենք ա՛յնքան պատկառոտ ըրած է որ պէտք իսկ չեն ունենար դիտողութեան:

Այս յարգանքը իրաւունքն է հոգեւոր իշխանութեան, որ կը պարտի գուրգուրանքով պահպանել զայն: Աշխարհիկ ոգին արդէն եկեղեցիէն դուրս իր հին յարգանքը ա՛յնքան ջերմեռանդութեամբ պահած չէ կղերականին հանդէպ, ուստի եկեղեցիին մէջ գոնէ պէտք է աշխատի պահպանել նուիրական իրերու հետ կապակցութիւն ունեցող այն պատկառանքը՝ որ թէև ուղղակի եկեղեցական սրբութիւններուն կը պատկանի, բայց անոնց ուղղակի պահպանը եղող կղերին ալ կը վերաբերի: Նախանձախնդրութիւն մնացե՞ր է հիմա կղերին մէջ այս մասին: Ընդհանուր առմամբ ո՛չ ա՛յնքան, իսկ շատ քիչերու մէջ հրաշքով մը դեռ իր գոյութիւնը պահպանող այդ նախանձախնդրութիւնն ալ յաճախ ա՛յս կամ ա՛յն անձին քմահաճոյքին խաղաղիկ կ'ըլլայ: Բայց զարմանալին հո՞ն է որ հոգեւոր իշխանութիւնը ինքնին յաճախ անտարբեր կը գտնուի նախանձախնդիր եկեղեցականին իրաւունքը եղող ա՛յդ յարգանքը գոնէ զօրաւոր պահելու եկեղեցիին մէջ, քանի որ, ինչպէս ըսինք, այդ յարգանքը իր գոյութիւնը գրեթէ կորսնցուցած է եկեղեցիէն դուրս:

Արդ, ինչպէս մեկնել այս տարբերութիւնը նո՛յն կղերին, նո՛յն եկեղեցիին վերաբերող մի՛ եւ նոյն մարմինին միջև, որուն անդամներէն իւրաքանչիւրը անքակտելի կապերով հոգեւորապէս զուգորդուած են իրարու, ա՛յնպէս որ մէկուն եղած նախատինքը կը վերաբերի միւսին, գոնէ մասամբ, մանաւանդ երբ աշխարհականի մը կողմէ հոգեւորականի մը հանդէպ յոյց տըրուած անպատշաճ արարք մը զուտ հոգեւոր և եկեղեցական խնդրոյ մը շուրջ կը դառնայ: Հոգեւոր իշխանութիւնը աւելի կը սրտնեղի նախանձախնդիր եկեղեցականին, քան պատկառանքի խոշոր թերութեան մէջ գտնուող աշխարհականի մը, մինչ պարտազանց կղերականներու և բարոյականութեան հակառակ արարքներու երեսէն արդէն իսկ վարկաբեկ եղող հոգեւորականներու մասին դժգոհութեան ձայներ կը բարձրանան: Այն ատեն հոգեւորականը կը պաշտպանուի, իսկ հոգեւորականին դէմ աշխարհականի մը անվայել արարքին համար բողոքի ձայներու առջև, հոգեւորականը կը դատաւիտուի: Ասոր մեկնութիւնը ո՛րքան ալ դժուար չըլլայ տալ, բայց իրողութիւնը միշտ իրողութիւն է թէ Հայ եկեղեցիին պատկառանքը վառ պահպանելու համար, և աշխարհիկ ոգիին անկրօն ձգտումներուն առջև հոգեւոր ստուար թումբ մը բարձրացնելու համար նոյն իսկ հոգեւոր իշխանութեան կողմէ սպասուելիք միջոցներուն կիրարկութիւնը լիովին չը կատարուի, և եկեղեցական սրբութիւններու և Աստուածային պաշտաման վայրերու հանդէպ անտարբերութեան և անպատշաճութեան ոգին մուտ կը գործէ աններելի անպատկառութեամբ:

Անցեալները կարգ մը Հայ ընտանիքներ Հայաշատ թաղի մը Բողոքականաց մատուռը կ'երթան, սրտնեղած ըլլալով թաղին եկեղեցականին և հետե-


ւաբար եկեղեցիին դէմ: Հոն կը հասնին այնպիսի վայրկենի մը՝ երբ հարկ կ'ըլլայ որ դռնապանը ազգարարէ իրենց թէ պարտաւոր են պահ մը սպասել ներս մտնելէ առաջ: Ոչխարի հլութեամբ և սուրբի պատկերի մը միամտութեամբ մեր դժգոհները կը կենան ժողովարանին արտաքին դրան առջև, ցուրտ օդին, և առանց ձայնիկ մը հանելու կը բարեհաճին սպասել ու սպասել, և կարգը գալով միայն մտնել սուրբ սեմերէն ներս:

Ինչո՞ւ նոյն պատկառանքը չկայ մեր եկեղեցիին հանդեպ. — Պատասխանը պարզ է, հոգեւորականք իրենց յանձնուած սուրբ աւանդներուն պահպանութեան ա՛յնքան նախանձախնդիր չեն. հաշիւով կը դործեն, և եթէ, նախանձախնդիր եկեղեցական մըն ալ գտնուի, կը բամբասուի:

Բայց խնդիր է թէ իւրաքանչիւր Եպիսկոպոս պարտաւոր է անպատճառ կարգ մը թիւը ըմբռնումներուն համակերպելու, երբ յայտնի անպատկառութիւն մը ցոյց կը տրուի աշխարհականի մը կողմէ, որ ո՛չ մէկ պատճառաբանութեամբ կ'արդարանայ: Քրիստոնէական եկեղեցին խտրութիւն չի ճանչնար դիրքի և աստիճանի՝ Աստուծոյ տաճարին մէջ, ուրկէջ ներս մտնողը պարտաւոր է համակերպիլ եկեղեցիին պետին, և ընկալեալ օրէնքներուն:

Եպիսկոպոսը հասարակ քահանայ մը չէ, թո՛ղ որ այդ հասարակ քահանան իսկ մեծամեծ իրաւունքներ ունի եկեղեցիին մէջ, երբ խնդիրը նուիրական իրերու հանդէպ հարկ եղած մեծարանքը պահպանել տալուն վրայ է:

Տ.



ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

Վաղինակ

Խմբագրական՝ Տ.

Սիսեոն Ծերունի

Յակոբ Տէր-Յակոբեան

Թօղայեան

Վահան Փափագեան

Քրոնիկ

Զոսարձալիք

Լոբերոն տրցակ

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ն

Ե Բ

Ք Ք Ե Ք Ք

Վ Շ Տ Ա Կ Ց Ա Կ Ա Ն

Առ համայնից սիրելի՛ Ամեն . Ս . Պատրիարք Հայր ,
Տ . Տ . Մաղափիս Արքեպիսկոպոս Օրմանեան ,

Առօրին մահուան Նորին՝ Սրբազնութեան սիրական Քրոջ
Ծնեալ՝ Օրիորդ Ագապի՝ Անուան Օրմանեան ,
1861 Յուլիս 11 , ի Գատը-գիւղ ,
Վախճանեալ՝ Տիկին ՄԻՀՐԱՆ Տէր-Ներսէսեան ,
1905 Դեկտ. 20 , ի Բերա ,
Թաղեալ ի Շիշի , Հայոց Գերեզմանատան մէջ .

« Արձակեցէ՛ք որ տեսանեմ զորչափութիւն աւերածոյն ,
« Զոր փրուզումն իմ Սէր(*)-Քրոջ անգին կենաց թողու իմ չուրջ ,
« Շուրջն ընտանի վառարանին սրտահատոր իմ սիրելեաց ,
« Ոյց ներշնչուն մայր-ոգին էր , հոգի՛ն որ վա՛խ , պակասեցաւ :
Բանաստեղծի ու Եղբայրի բարբառով մը աղէկտուր ,
Կայլակներովն ոլուն ոլուն , աղի լեղի արցունքներուն ,
Կողկողազին հեկեկանօք ու հատկեալ հեծկլտանքով
Աղաղակե՛ց 'ի սնար մահճին եւ յանոտիցն այն Դագաղին ,
Ուր , Քոյրն իր Սէր , Սէրն՝ Ագապին հոգեվարեց , պատանք հագաւ ,
Իր մայր-կեանքին քառսուն եւ հինգ ամառներուն վառ արփիներ
Մեկնող տարւոյն արեւմուտքին մէջ վերջալոյս ծրարելով ,
Դնաց ծագել նոր արշալոյս անդրաշիրիմ տարաշխարհին ,
Ուր , մարմինը գերեզմանէն հոգի թռչի , դառնայ հրշտակ ,
Մերկողքն ու՛կոծն իրեն ըրած երգ Կարափի ու Ողջերթի ,
Դերեզմանին դանդիւն ալ մեզ թողած յայթի՛ն անմահութեան ,
Ոյր՝ ապապակով ծարուահիւժ պասքի հոգին մեր ի ծնէ ,
Հոգին՝ որ չէ՛ լոկ քառ մ'ունայն , այլ հաւատքն ինք , նշոյլ մ'Աստուած ,
Կաթո՛ղ բոյրը կեանք-ծաղիկին , ձա՛յն՝ կեանք-քնարին , բո՛ց՝ կեանք-ջահին :

Թէեւ , Աստուած , հոգին՝ Քո չունչն արարչական , յօժար ի՛կրել ,
Այլ մենք մարդն ենք , ընութեան զաւակ , մեր մարմինն է , ո՛հ , յոյժ տկար .
Կարելի՞ է չ'արիւնի սիրտն՝ մահն էր խրէ՛ դաշոյն մեր կուրծք ,
Ո՞վ կրնայ մնալ անկարեկիր չուրջ Դագաղին ու սեւ Հողքին ,

(*) Ագապի՝ Յոյն աղափիկն՝ սէր բառն է , որուն բայն ալ՝ աղափն ,
աղափիս , աղափի . սիրեմ , սիրես , սիրե կ'ստնարհուի . Յոյժ ար-
տասուելի Մայրը . Տիկին Ագապի իր երկու զստրիկներէն մին
Սեդարիի անուանելովն իր անուան ալ՝ աւելի պայծառ ու խոր-
հրդուտը նշանակութիւնն ի վեր հանած է :

Ուր մեր այնքան գգուած , չոյած Սիրականը մեռել հանգչի ,
 Խլուած ա՛լ մեր ծոցէն , գոգէն , ցուրտ շիրմին տակ թաղուի դիակ ,
 Արցո՛ւնքն համակ . համակ հառաջ , կսկիծ , թախիծն ենք ու մնանք ,
 Գեղո՛ւն մեր սիրտք ու մեր բարբառք , պղտորին աչք , կ'ամպոտին միտք ,
 Բերութի՛նք նետուիլ յ'սո՛յն խորխորատ ուր կը նետուի մեր սիրելին :

Միածինդ իսկ Աստուածորդի , դողա՛ց մահէն , քրտի՛նք հոսեց ,
 Արտասուե՛ց ալ , ւ էլի՛ էլի՛ն , ւ անցո՛ բաժակն , աղաղակեց ,
 Սիրականիդ մահուանն ի լուր , սո՛ւգը մտան երկինքն , երկիր ,
 Խաւա՛րն հագաւ արեգակդ , ու , առ վշտի տագնապագին ,
 Հեզո՛ւ ելան ժա՛յռք իսկ , ցեւա՛ւ վարագո՛յրն ալ Քու Տաճարին ,
 Մեռեա՛լք անգամ գերեզմանէն դուրս թռան լալու Միածնիդ մահ ,
 Մե՛նք որ մարդ ենք , մարդկայինն ալ մեզմէ օտար չի համարուի :

Դա՛ռն է , ո՛՛ Տէր , ու դառնագո՛յն , մահդ երբ հնձէ մեր սիրական ,
 Չուզե՛նք մենք լալ , խնայե՛ պա՛հ մ'ալ մեր սիրելեաց ու մեր կենաց ,
 Չուզե՛նք որ մահդ ընէ ընդ միշտ հոգին՝ այրի , զաւակը՝ որր .
 Ի՛նչ պակսի Քեզ , թէ երկարի մեր կեանք-ուղին դէպ գերեզման ,
 Ու թողուս որ լիայագուրդ ու անտրտում վայելենք մենք
 Մեր սիրելեաց սիրո՞ւմն ու գուրգուրանքն ու գգուանք , գորով ,
 Բիւր բիւր իղձերն , յոյսերն անթիւ , զոր կը ցանենք , մէն մի քայլի ,
 Տաճանագին այնքա՛ն քրտամբք ոռոգուած մէջ կեանք-ակօսին ,
 Մեր հերկերուն , մեր երկերուն հունձքն ու կուժքն ալ շատ թանկագին ,
 Որոց , աւա՛ղ , մահուդ խորչակ ածէ աւեր , շատ տարածամ ,
 Խնդի՛ւք մեր լի բաժակն այնինչ հպած մեր շուրթ , փշրէ՛ յանկարծ .
 Մեր հրճուանքին նեկտարն անոյշ լեղի՛ն ըրած դառն արցունքի ,
 Ու մեր կեանքն ալ սուգը թաթխած՝ ցաւ , ցեց զէշնէ՛ իր ետեւէն ,
 Ո՛վ նսեհին աղէտալի , հա՛րկ , ոյր առջեւ մարդ ծռէ գլուխ :

Դեռ երէկ էր . մենք տեսնէինք Բամբիլն աղուոր , սէր-Ազապին ,
 Երեակ քերցն հետ , Շնորհաց երեակ քայրերուն պէս , նազէլաճեմ ,
 Խնդում , ցնծում կը սփռէր Ան , ուր որ իր գէ՛մք ճառագայթէր ,
 Եղած էր Ան Տանն Օրմանեան պարծանք աղջկին իմաստուհի ,
 Պճնեալ չնիկ ձրիցն սժախք , Մուսայից նոր ընկերուհի ,
 Գեզն իր ճակտէն կաթէր շնորհք , զեղը ժպիտ՝ խնձոր այտէն .
 Քայլերուն տակ կեանքը ծաղկէր երանութիւն մշտադալար ,
 Աչքերն համայն քղանցքն ի վեր հալուն հիացք հետեւէին .
 Շո՛ւք ձգուէին , չուք շուրջն իրեն , մեծարանքներն ու ակնածանք ,
 Շառագունանք գէ՛մքին լաշալ , կո՛յսն ամօթլեամ , պարկեշտասուն ,
 Հայրին , մայրին , եղբայրներուն շատ սիրելի , զինչ բիր ական ,
 Ոյց գուրգուրոտ տանէր խնամք փոքրիկ մօր մը պէս հոգածու .
 Վայելելով ինքն ալ անոնց բիւր գգուանաց շոտյանքներ :
 Նոր հրապոյր հագնէր ինչ որ հպէր մատանցն իր գեղարուեստ ,
 Նուրբ ու փափուկ ճաշակն իր մէջ , բնապէս պէս , տեսնէր , գտնէր
 Ինչ որ աղէկն ու աղւորն էր , ինչ որ ընտիրն ու օգտակար :
 Օրիո՛րդն էր Ան կուսագեղ ու հանճարեղ Դուստրն Օրմանեան .
 Օր մ'ալ եղաւ նոր հարս , նոր մայր , Տիկին ՄիշրԱն Տէր-Ներսէսեան ,
 Ժրագլուխ ու իմաստուն Կինն Առն իր անմահ Պսակ ,

Հրչտակուհին, որ տունն ընէ գտեալ դրախտ նոր փափկութեան,
Ընտանի յարկն՝ երջանկութեան նոր օթեւան, մատո՛ւռ սիրոյ,
Մա՛յր և մտացի որ, հետ ստեանց մեղրին, ջամբեց ճիղմ որդեկաց
Գեղեցիկին, ճիւղմարիտին, բարւոյն բոլոր անուշութիւն:
Կի՛ն բարեգործ, զթութեան Քո՛յր թռաւ որբոց, այրեաց Յարկեր.
Ո՛չ մամոնան, այլ ի՛ր լուման՝ տուաւ անոնց մխիթարանք,
Հիւանդին՝ դեղ, և մերկին՝ զգեստ, քաղցեւոյն հաց բաշխեց յաճախ,
Սանք, սանուհիք Եսսեանին ու ա՛յլ թաղի՝ խօսո՛ւն վկայք
Բոխսիրտ Տիկին Ագապիին սիրոյ, զթոյ ագապներուն:
Ինք բարեկիրթ. բարեսիրտ ալ, կին ամուսին, հաւատարիմ,
Բերաւ պատիւ Տիար Ամուսնոյն, եղաւ Անոր փառք ու պարծանք,
Կենցաղագէտ՝ բարքն անբասիր, եղաւ սեռին բարի տիպար,
Եւ իր Բոլոր բարութեանց հետ՝ բարի Քոյրն էր Պատրիարք Հօր,
Զոր կը սիրէր բարի մօր մը խանդաղատուն գորովանքով,
Սփոփելով ընդ միշտ Անոր ծնողազուրկ կեանքին տխրանք:

Քու Ամուսնոյդ ու Որդեկաց, մեր Պատրիարք Հայր՝ մեծ Եղբօրդ ալ,
Տունին պաշտպան ու պահապան բարի հրչտակն, բարի ոգին
Դո՛ւն էիր միշտ, ո՛ր Ողբացեալ Բամբոջ սիրուն, հէ՛քդ Ագապի,
Զո՛ւր ցայդ, ցերեկ Քեզ իրենց քով պիտի փնտռեն լալահառաջ,
Ու մխալով պիտի դիտեն ինչ որ Քուկդ էր, ու Քեզ յիշէ.
Լքո՛ւմ ցանեց մահդ հոն ուր կեանքդ զգեւորէր ներկայութեամբ,
Ու տօնական բոլոր ցնծումք պատանքիդ հետ սեւ սուգ հագան:

Քեզ ճանապա՛հ բարի մաղթենք գէպ երկինքին արքայութիւն,
Խաղաղութի՛ւն նշխարքներուդ, որ միջ Մատուռ Հողբիդ հանգչին,
Մատուցանենք Յիշատակիդ մեր սխրանքի հուսկ մեծարանք,
Օրմանեան թէ՛ Տէր-Ներսէսեան Գերդաստանաց՝ մխիթարանք:

Մեր այս տողեր զոր կ'ուզենք Քեզ, ո՛ր սգաւոր Հայր մեր ու Տէր,
Այո՛, տողեր վշտակցական, ի յիշատակ տխրանուէր
Յերայրապաշտ բարի Քրո՛ջդ, յոյժ ողբացեալ Ագապիդ,
Տանն Օրմանեան Բարեգործ ու Բարեւեռ ազնիւ Դուստրին.
Տիկնոջ Միհրան Տէր-Ներսէսեան, այդ Բարեւիտ Ամուսինին,
Բարեգործ Մօրն ու Բարեգործ Կնոջ մահուան,
Ո՛չ միայն իմ այլ ընդհանուր Ազգին. սիրտէն ու աչքերէն
Բղխած անկեղծ կսկծանքովն ու արցունքովն համակ օծուած,
Մեր ամենուս վշտակցութիւնքն ու համակրանքն հոն հոծացած.
Որպէս Պսակ ու Ծաղկափունջ սգանարօտ մեր զգացմանց,
Կախենք ճակտէն Պատրիարքաքոյր Ագապիդ Յուշարձանին,
Յղելով ալ, իմ հոգւոյս հետ, -- ամենուն ալ ի միասին. --
Մշտնջենի յուղարկաւոր ու սգաւոր՝ իր դագաղին:
Ընկա՛լ ապա, ո՛ր Ամենուս Դուն սիրական Պատրիա՛րքն Հայր,
Ի հաճոյս Քո, մեր վշտակցի ու սգակցի այս խուն նուէր,
Փոխան զուարթ ընծաներուն թէ՛ նոր Տարւոյն թէ՛ Սուրբ Ծննդեան:
Մաղթեմ, երկինքն ու Սուրբ Հոգին մխիթարէ՛ հոգիդ ցաւած,
Ջնջելով չուտ արցունքն աչքէդ, սուգը՝ սրտէդ, մտքէդ՝ սեւն հոգ:

Թէ տա՛յր Աստուած՝ հրաշիւք իմն ինձ պահ մը յանկարծ լինել Յիսուս,
Ագապիին ճաղին վրայ ձայնէի ես. «Տալիքա կումի»:

1905 Դեկտ. 23, Կ. Պոլիս:
(Օր 10րդ Տարեդարձի հրատարակու-
թեան Հանրագիտակի)

ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



ՊԱՐԶ ԽՕՍԳԵՐ

ՔԱՂԿԵԴՈՆԻ

ԿՐԹԱԿԱՆ ԲՈՒՐԱՍՏԱՆԸ

Թաւանճեան մրցանակէն ետք, որ անցած տարի ամբողջ լրագիրները զբաղեցուց, ահաւասիկ նոր տարւոյն հետ կուգայ կը հաստատուի ուրիշ ո՛չ նուազ տարօրինակ ու անիմաստ մրցանակ մը, Գաւառ-գիւղի Արամեան վարժարանին Հոգաբարձութեան կողմէ: «Ուսուցիչները քաջալերելու եւ անոնցմէ արդիւնաւոր աշխատութիւններ ձեռք բերելու համար», ինչպէս գրեցին լրագիրները, Հոգաբարձութիւնը 5 եւ 2 օսկինոց երկու մրցանակ հաստատեալ է, որոնք տարւոյն ընթացքին մէջ լաւ արդիւններ ցոյց տուող երկու ուսուցիչներու պիտի տրուին եղբր իբրեւ վարձատրութիւն:

Ասկէ աւելի ձախող որոշում մը չէինք կրնար երեւակայել: Այս մրցանակը ո՛չ միայն նախատինք մըն է ուսուցչութեան պատուոյն դէմ, այլ նաեւ տեսակ մը հրապարակային խոստովանութիւն է որ Արամեանի ուսուցիչները, — որոնց մէջ այնքան հմուտ եւ պատուական ուսուցիչներ կը գտնուին սակայն, — լիովին եւ ըստ արժանւոյն չեն կատարեր իրենց պաշտօնը եւ արտաքին խթանի մը կամ վարձատրութեան մը կը կարօտին արդիւնաւոր պաշտօնավարութիւն մը ունենալու համար: Եթէ ուսուցիչ մը ամիսը 45 կամ 18 դրչ աւելի չահելու համար է որ մղում պիտի տայ ուսուցանելու իր եռանդին, չա՛տ ողորմելի գաղափար մը կը ներշնչէ մեզ իր պարտաճանաչութեան ու պաշտօնի գիտակցութեան վրայ: Եթէ ուսուցիչ մը իր արուեստը չի՛ սիրեր կամ մանաւանդ չի՛ գիտեր, ամսական ճգճիմ գումար մը աւելի չահելու յոյսը դիւթական ի՞նչ զօրութիւն պիտի կրնայ ունենալ որ արուեստը սիրցնէ կամ սովորեցնէ ուսուցչին:

Այս մրցանակը հաստատողները չխորհեցա՞ն արդեօք որ ուսուցանելու սէրը եւ պարտաճանաչութեան զգացումը 18 դրչով ծախու առնուելիք ապրանքներ չեն, այլ ինքնածին, ինքնարոյս տրամադրութիւններ են անոնք:

Եւ յետոյ, մրցանակը ուրիշ ձախող արդիւնք մ'ալ պիտի ունենայ: Տեսէք ի՞նչպէս. — Արամեան վարժարանը ընդ ամէնը 16 ուսուցիչ ունի: Ըսենք թէ տարւոյն վերջը ասոնցմէ երկուքը վարձատրուեցան լաւ արդիւնք ցոյց տուած ըլլալուն համար: Այն ատեն ի՞նչ կարգադրութիւն պիտի ըլլայ մնացեալ 14 ուսուցիչներուն նկատմամբ, որոնք «լաւ արդիւնք տուած պիտի չըլլան», Գաւառ-գիւղի Հոգաբարձութեան տրամաբանութեանը համաձայն, Հոգաբարձութիւնը զանոնք պաշտօնի վրայ պիտի պահէ՞ դարձեալ: Եւ այն ատեն իր խղճին հակառակ գործած պիտի չըլլայ, լաւ արդիւնք չտուող ուսուցիչներուն ամսական վճարելով վայրապար:

Ի՞նչ տեսակ տրամաբանութիւն է այս, որ սկսած է ծաղկիլ Քաղկեդոնի կրթական բուրաստանին մէջ:

ՕՒՄԵՌՆ ԾԵՐՈՒՆԻ



ԿԱՂԱՆԳԻ ԱՌԹԻԻ

(ՖԱՆԹԵԶԻ)

Առ քերթողութեան ուսուցիչս.

Կաղանդ ե, ա՛ղբար, կաղանդ ե այսօր,
Կաղանդ ե, mon cher! Կաղանդ. Ամանո՛ր,
Կրկնէ ամեն մարդ, քոքոզ, ունեւոր,
Հարցնող չրկայ քե՛ կուս կը բռնես կոր,
Նըւեք տալու ե. քրոնջ ու եղբօր,
Ու դեռ աչ ամբողջ օխտ պօրտիդ բոլոր:
Հայրը իր զաւկին, զաւակն աչ իր հօր,
Էրկը կնկան, կնիկն աչ անոր,
Երե մեկն-հայրիկ եւ եւ ունիս բոռ,
Փորձա՛նք ահագին, փորձա՛նք ահաւոր,
Մէյրեկ ճիճի տալ եւ իւս պարտաւոր:

Հապա դրացուհիդ՝ մասամ Թիյոն որ
 Ունի մանչուկ մը կէս մը պեխաւոր,
 Նուէր մ'ալ անոր պզտիկ կամ խոշոր.
 Երէ չսաւ, օ՛, մեծ աւօր, խա՛յ որ:
 Մասամ Օկտօրին հապա այն աղօր,
 Որ ունի աղջիկ մը նրման ճիշդ իր մօր,
 Ասոնց ալ չե՛ս սար բան մը ասանկ օր:
 Աւ արշաւածիդ ալ հոգեհասոր
 Ապարանջան մը նրիւն պիտի,
 Երէ ոչ կ'ըրաս ուղտերու . . . մեկնոր,
 Աւ չըխրպնած շան, աներե՛ս butor.
 Հապա ա՛ս, ու ա՛ն հապա . . . et encore!
 Աւ երբ արձակես՝ զո՛ն՝ հառաչ մը խոր,
 Կեցի՛ր նայիմք, դեռ չը լըմընցաւ ո՛ր . . .
 Մարդ ըլլալդ է խիս շատ մեղաւոր,
 Որպէս զի անցուի ասա՛նկ . . . փառաւոր:

X

Առջի իրիկուն, քա՛ միկնէ աurore,
 Միկնէ որ երգեն մեր հաւն ու աջոր,
 Հաճեր, խրչեղներ հազա՛ր բիրաւոր
 Տունիդ զանգակը չեն ձգեր անդորր:
 « Այօ՛ս Վա՛սիլի՛ս » պօսան մեծագոն՝
 Առանց ընելու ձայներնիկն accord,
 Աւ երբ չըսաւ տասնոց մը կոր,
 Տունիդ դուռն ընեն կոն՛ր ու կոն՛ր:
 Աւ աստուկ կանուխ, սուս-բերան Թագոր,
 Զրպ-զրպալ Ուսկի եւ զիրօզ Գիրգոր,
 Զահանկիրները քաղիդ պատնաւոր,
 Որոնք կը բուրեն օդի ու սրիսնոր,
 Բերեն սիւնիք մը տախտակի չափ չոր,
 Որու փոխարեն է խիս հարկաւոր
 Յեծալ գոնէ մի քանորդ: ու alors,
 Գիշերապահն է որ կոկո՛ն կոկո՛ն,
 Կուգայ տա՛նկ-տանկովն իր հանդիսաւոր
 Մաղթելու քեզի աւ շընորհաւոր,
 Որպէս զի նեւեղ կարենայ իր փոր
 Երկու սերկելի, մեկուկէս խնձոր:
 Պազալաքին ալ հազած իր նոր շոր,
 Ճնկած երկու քեք, եւ ոչո՛ր մոչո՛ր,
 Կուգայ մաղթել մի շեշտով կարեւոր
 Քեքօթիօ մը քի՛ մեղրածործոր:
 Յետոյ գալ ձեռով մը խորհրդաւոր
 Մըսավաճառը, որ կերցուց ոսկոր
 Ասե՛ն օր, մաղթել որ Տերն երկնաւոր
 Այս տարի ընէ քեզի քաղաւոր,
 Աւ այս մաղթանք՝ խիս պատշաճաւոր՝

Զրի չէ՛, այլ կ'արժէ piix fixe: Հիկո բոյոր.
 Հիմա եկողն է մի պարան Ծաքթօր
 Որ հե՛ղ մը միայն բերաւ մի գիր, օր,
 Հիկոնց մ'ալ անցուց պէ՛ս է տալ տար:
 Թերթի ցուիչ մը յաջորդէ անոր,
 Զեմք բռնած մի պարզ ոտանաւոր,
 Հիկոնց մ'ալ տար, աւ ի՛նչ ունի տօր.
 Աւ մեկնիկն տանկ գիշե՛ս քէ ինձո՛ր,
 Բիթերնիկն կախած, դեմերնիկն խոճոն
 Թէ ինչո՛ւ քանոյ մը միայն կուտաւ կոր
 Եւ ո՛չ զրպանիդ դրամներն բոյոր:
 Աւ հիմա կուգայ մի ուրիշ քափօր . . .
 Ծանօթ, անծանօթ դեմեր կարեւոր
 Կուգան խօսերով՝ ո՛ւժ՝ խառնափնդոր,
 Մաղթել նոր տարի, քարի ամանոր,
 Արդուիել զրոյս, տասներկու հասոր,
 Եւ մաշեցնել քաղցոց ու արոն,
 Ah! vraiment messieurs, vraiment, c'est trop fort!

ԵՐՈՒԱՆԻ ԹՕԼԱՅԵԱՆ

XXXXXXXXXXXXXXXXXXXX

ՔՐՈՆԻԿ

ԴՈՒՔ ՄԷՋԵՆ

Ամէն անգամ որ կը տեսնեմ Միքայէլ
 Զափրառածեանը, միտքս կուգայ իր հեղի-
 նակած « դուք մէջէն » ը:

Պլտիկ պատմութիւն մը, եթէ կը հա-
 ճիք, իմ մանկական յիշատակներէս: Ասկէ
 35 տարի առաջ Սկիւտարի մէջ կազմուե-
 ցաւ, մասնագէտ ուսուցիչներու մարմին
 մը, որուն նպատակը պիտի ըլլար բարձրա-
 գոյն վարժարան մը բանալ Սէլամիէի մէջ:
 Այս մարմնոյն անգամակից ուսուցիչներէն
 իւրաքանչիւրը իր մասնագիտութեան հա-
 մեմատ պիտի դասախօսէր վարժարանին մէջ,
 եւ աշակերտներուն ամսաթուղակներէն գո-

յացած հասոյթով վարժարանական ծախքերն հոգացուելէ վերջ, աւելցած դրամը պիտի բաժնուէր անդամակից ուսուցիչներուն մէջ:

Վարժարանը բացուեցաւ, անօրէն կարգուեցաւ ժամանակին բանաստեղծ-գրագէտ-ուսուցիչը Ֆէլէկեան Սիմոն էֆէնտին: Անգամակից ուսուցիչներէն մէկն ալ էր Միքայէլ Չափրաստճեանը, որ պարի դասը կ'աւանդէր: Բոլքան սորվեցներէ վերջ սկսաւ բատրիկի, իր հեղինակած «դուք մէջէն»ով:

Դուք մէջէն ես քովէն

Անցնինք դիմաց փոխենք տեղ

Նոյն ձեւով տեղերնիս

Դառնանք միատեղ:

Թէեւ չատ քիչ կեանք ունեցաւ այդ վարժարանը, վասն զի եղած հասոյթը ծախքերուն անգամ չի բաւեց:

Այն օրէն մաքիս մէջ տպաւորուած էր Չափրաստճեանի «դուք մէջէն»ը, որ այսօրուան քրոնիկիս վերնագիրը ըլլալու բաղդըն ունեցաւ:

Չեմ կարծեր որ Ձեր մէջէն ճանչցող չըլլայ Չափրաստճեանը, այդ վաղեմի ֆոնիզերասանը, որ այսօր նիւթական անձուկ վիճակի մէջ կը գտնուի եւ կ'ըսեն թէ, հանրային գթութեան դիմած է Ս. Պատրիարք Զօր կողմէ իրեն յանձնուած կոնդակով մը:

Սիրելի՛ Չափրաստճեան, մտքէդ կ'անցնէ՞ր արդեօք թէ՛ 18րդ դարուն մէջ քու հեղինակած «դուք մէջէն»դ, 20րդ դարուն մէջ արձագանք պիտի գտնէր քու վրասդ գրուած այս տողերուն մէջ:

Տե՛ս օրուան Հանրագիտակ թերթը: Խմբագրութիւնը կ'ստանձնէ այսօր այն անձը՝ որ 5 տարի առաջ արգէն խմբագիրն էր նոյն թերթին: Վահան Փափագեան հինգ տարի առաջ խմբագրութեան մէջ մտաւ պարելով:

Դուք մէջէն ես քովէն

Անցնինք դիմաց փոխենք տեղ:

Հինգ տարի վերջը, այսօր, Պապօնեան վերստին ձեռք կ'առնէ իր նախկին պաշտօնը, դիմաւորելով՝ Վահան Փափագեանը եւ պարելով:

Նոյն ձեւով տեղերնիս

Դառնանք միատեղ:

Նոր տարւոյն առթիւ «Ծաղիկ» կանանց յատուկ թերթն ալ «դուք մէջէն» պարեց: Այր գրողներ, գրիչներ ձեռք առած, կին գրողները դիմաւորեցին պարելով:

Դուք մէջէն ես քովէն

Անցնինք դիմաց փոխենք տեղ:

Այս շարժու դարձեալ կին գրողները վերադարձան իրենց տեղերը, այր գրողներուն երեսին գոչելով:

Նոյն ձեւով տեղերնիս

Դառնանք միատեղ:

Սկիւտարի Միացեալ վարժարաններու ուսուցիչներն ալ քու «դուք մէջէն»դ կը պարեն այս պահուս, փոփոխակի մէկ դպրոցէն միւս դպրոցը երթալով ու ըսելով:

Դուք մէջէն ես քովէն

Անցնինք դիմաց փոխենք տեղ:

Սակայն, առ այժմ՝ միւս երկու տողերդ անտոյժ պիտի մնան, ցարչափ Միացեալ թաղերու թաղ. Խորհուրդը չարունակէ իր պաշտօնը մէկ եկեղեցիէն միւս եկեղեցին երթալով: Բան մը, զոր կը մաղթենք եւ կը փափաքինք որ առիթ չունենանք մնացեալ երկու տողերը ամբողջացընելու համար:

Նոյն ձեւով տեղերնիս

Դառնանք միատեղ:



Ք Ր Ո Ն Ի Կ

Պօնապաշտեալ եւ կիները. — Նուերներու քառիւղը. — Պսոնները եւ սա-
ւոնները. — Աղիւսախնամը. — Էրիկ կիկան ֆօնքաւսներ, արեւմտի առթիւ:

Հագար ֆրանկ կը խոստանամ այն Գե-
րազնիւ Ընթերցողին՝ որ կարենայ հաստա-
տել թէ, սա վերը թուածներէս գոնէ հատ
մը գլխուն եկած չըլլայ եւ կամ տեսած չը-
լլայ այն պատկերները՝ զորս գծելու պատիւը
պիտի ունենամ քիչ մը վարը:

Նախ առնենք առաջին նիւթը, Պօնապա-
շտեալ եւ կիները:

Մաղը մօրուքը ճերմկածները հարկաւ
ինձմէ լաւ կը յիշեն, Բերայի պազառը ե-
ղող այդ երկգուռ վաճառատունը, առաջ՝
այսինքն այն թուականին երբ դեռ հարսերը
իրենց կէսրօջ ձեռքը համբուրելու նահա-
պետական սովորութիւնը ունէին, եւ թէ
հիմակուան պէս մինակ գլուխ շարժելով չէին
գոհանար, ահա այդ ատենին Պօնապաշտեալ
ճանչցուած էր իւր խաղալիքի մեծ մթերա-
նոց մը, մինչդեռ հիմա ամենքս ալ կրնանք
վկայել թէ՝ ոչ թէ միայն խաղալիք, այլ
մարդ արարածին բոլոր պէտքերը հոն կը
հայթայթուին, մինչեւ անգամ... հարսըն-
ցու աղջիկներ հոն՝ աղջիկտես կ'ելլան, այս-
ինքն հոն կը ծախուին:

Անցեալ շարժու, չեմ գիտեր որ օր,
ուրքս ներս դնելու մեղքը գործեցի, հոն ուր
կը վճային կիները, Պօնապաշտեալ:

Կանանց բաղնիքը գացած էք, ես գա-
ցած եմ... մինչեւ 12 տարեկան հասակս,
ու լաւ կը յիշեմ այն խլացուցիչ վժտուքը,
որ տեղի կ'ունենայ այդ քարուկիր գմբէթին
տակ, ճիշդ այդպէս էր Պօնապաշտեալ սալօնին
մէջ, բայց տարբերութիւնը սա էր որ, կի-
ները փոխանակ փեշխնաղ կրելու՝ տարբեր
ֆօքսիւնով եկած խառնուած էին, ուս ուսի,
ինչպէս կ'ըսեն նմանօրինակ պատկեր մը
բացատրել ուզած ատենը:

Չեմ գիտեր թէ այս տարի արդեօք տի-

կիները խօսք-մէկ ըրած էին իրենք կատա-
րելու նուէրներու գնումը, քանի որ ջուրին
ֆօնմիւլին պէս (մարդ+կիկ) տեսայ հոգ:

Հոս կին, հոն կին, բոլոր ցուցադրած
առարկաներուն մօտ կին, կին օղլու կին,
որոնք աչքերին խոշոր խոշոր բացած որո-
շումներ կ'որոճային բան մը առնելու մտօք,
մինչդեռ իրենցմէ ոչ ոք ֆացախն կը մօտե-
նար: Կիները դժուարահաճ կըլլան ներքի է:

Ես որ, բան մը առնելէ աւելի շարժուան
նիւթ մը ձեռք ձգելու մտօք, ոլոր ոլոր
կուգայի միջերնին, յանկարծ ձայն մը զիս
քամեց կեցած տեղս,

— Քա Սուրբի՛կ, ֆիլօքը խայրիւ ըրի...
Հա՛, իմիններս հոս են եղեր ըսի, ու
սկսայ ուշի ուշով հետեւիլ իրենց:

Հարցնելու հարկ չիկար, թուալթնին
խրգամուխի պէս դուրս կուտար արդէն
Բերացի չըլլալին, անկէ անդին հոգ չէր,
ամէն մէկ արուարձան մի եւ նոյն ապրանքը
ունի արդէն, ի բաց առեալ Գատը-գիւղը,
որ չապիկ մը կը տարբերի միւսներէն:

— Երկու լուսը քէօռնայ, անտար ալ
ըսի քի ֆառպալայէս մի զատուիր, ասոր
աստեղը քու գիտցած տեղդ չէ տէյի...

— Քա քուրուկ, կայնէ նայիմ, մազի
պոյա հարցունեմ, ըսաւ...

— Տահա նէլը, քա ասոր աստեղը մա-
զի պոյա կը ծախեն քի... բիւթիւն ճիճի
պիճի բաներ են չորս դին... ես ան չեմ
մտմտար կոր, չելլայ մէկը աչկ տնկէ տէ
այարթմիւ ընէ, է՛յ... ըլխարք է՛...

— Ամա՛ն դուն ալ... մազերն ալ չէ
պոյայեր քի չիւրէլէնմիւ ըլլամ... հիմա ուր
է նէ օթան կ'ելլայ, հէլէ մենք սըտեղէն
առնելիքնիս առնենք օթայէն վիւնայ...

— Քեզի բան մը ըսեմ, անանկ բան մը

առնեմ քի պարէ խուլանմիշ ըլլայ տէ ֆայ-տան տեսնայ Մաքսիկը ...

— Էյ ի՞նչ սանքի, ի՞նչի տայիր բան է ըսածդ ...

— Կեցիր հիմակ կը տեսնաս ըսելով հոն գրադած կառնօնի մը կը մօտենայ,

— Ա՜ֆ էտէրսին, ամա ինչո՞ւ ա՜ֆ էտէրսին, ասանկ օրի ավու՞ւն ավու՞ւն ճէպէ՞ով մէ կ'ընէ կոր ...

— Նէ տիր օ մատա՞մ ...

— Պիզիմ Մաքսուհիցայա պիր խալչալլըն իստէյօրըմ, հէտիյէլիք, աճապա՞ ...

— Պուլո՞ւր ...

— Շու պիլիրսին, տակերնուն չիչման գալչալար եարըյօրլար ... ի՞նչ գիտնամ...

— Շիմտի իսիմ վառ մատամ ... օ՛ մօտիսթալար պիլիւլէն, ..., սան վէնթ քաթըն էտըմի՛ ... կը ձայնէ քէսին.

— Խաթընը դուն ես, մայմուն չուն, Պէյօղուցի ըլլա՞յ նէ, չըբըն իշի կը հանէք ծառքը կուտաք, մեզի դայ նէ, բիւթիւն բիւթիւնէ բութ կը կտրիք կոր ... խալչալլըն ուզիլլը ամօթ է ...

— Քա ճանը՛մ, ինծի մտիկ ըրէ, ատոր ալ բարա տալը ի՞նչ է, ես տունը ողորմած հոգի տուտուիս տակի չիլթէին բամպակները ուշիմ, հին բօլքաւ կը ծեւեմ, բամպակը մէջը կ'առնեմ, մինակ դուն Մաքսիկին տիպին չափը ուռումիզտէն առ տէ ինծի խըրկէ ...

— Էյ ապրիս, ատ ալ խեղք է ... ըսելով դուրս կ'ելլան զոյգ նատիտէները, մինչ ես խնդուքէս թուլցած կը մտածեմ, թէ երբ պիտի չորնայ արմատը այս կարգի տուտուններուն, որոնք ամօթը կը թաթխեն հայու կնկան անունը, որչափ ալ նորեւուններ գանուին ատոնց մէջ, Ըստ իս, խմորը մէկէ, բայց չաղուածքը տարբեր:

×

Պէտք է գիտնալ որ մի միայն, քթիբիոս միւսիւները եւ հօրպիլիպիմպօմ օրիորդները չեն, որոնք այս եղանակին տուններու լայն սրահներու մէջտեղ դէմ դիմաց քատուիլ կը խաղան, հապա, անշունչ ճիճիներու առարկաները, նուէրներն ալ կը կատարեն այդ դերը, նամանաւանդ կաղանդի գիշերը:

Կարելի չէ մէկիկ մէկիկ այցելել կամ ներկայ գտնուիլ այդ գիշերը, մօտէն համոզուելու համար մեր ըսածին, սակայն հաւատքիս պէս գիտեմ այն պատկերները, զորս գծուեցան կաղանդի գիշերը, բոլոր քրիստոնեայ տուններու մէջ:

Հոս չենք ուզեր քօղը վեր առնել, մեր Հայ-լայթ դասակարգին սալօններու մէջ անցած նուէրներու քատուիլը նկարագրելով, այլ պատմենք համառօտակի սանկ ըսուած դասակարգներու պատկերները, որոնք քիչ մը կրնան խնդուք պատճառել մեր ընթերցողաց:

Մեր մէջ սովորութիւն է, կաղանդի գիշերը, պզտիկները մեծերուն կ'այցելէն, փեսաները՝ աներոջ տունը կ'երթան, նշանածները՝ իրենց զոքանչին վիզիթ կ'ընեն, եւ որ ի կարգին:

Պատկեր մը բաւական է կարծեմ գաղափար մը տալու համար:

Ա. աղայի տունը, երկու կազ՝ եւ չորս մօմ աւելի կը վառէր շաբաթ գիշեր, ու մէջտեղը, սեղանին վրայ չտկուած պտուղները, պզտիկներու սիրտը կը մաշեցնէին, հեռուէն թուքերնին կլլել տալով:

Տիկին Ա. խօսք առնելով,

— Քա աղջիկներ, չելլաք բաթ տէյլ օթթան հանէք հէտիյէները. անոնք տալերուն պէս, դուք ալ խառչըլլիս կը հանէք կուտաք ...

— Ինծի նայեցէք Տիւրիւկ, ներսէն քիչ մը տէպէշիր պէր տէ, թօրլուն փառլաթմիշ ընեմ ...

— Աման դուն ալ, գիշերով ի՞նչ կ'երեւայ ...

— Գիշերով չերեւար ամա, առտուն ծառքերնին ստենէն նէ ֆօյան օթթան կ'ելլայ ...

Նոյն ատեն հիւրերը կուգան, կարգաւ կը շարուին, ու բոլորին աչքը իրարու ձեռքի վրայ կ'իյնայ:

Սովորական է ինչպէս էք ներու մախառան հատնելէ վերջ, եկող հիւրերէն տիկին մը, ձեռքը փորն ի վար կախուած գրպանը դնելով,

— Աղջիկներուս լայըխ պան մը չէ ամա, կարողութիւննուս կէօրէ, քիչը շատի տեղ

առէք, ըսելով մէկ երկու կտոր բան, կ'երկարէ օրիորդներուն, որոնք, խպնելէն աւելի ուրախութիւնն ին կ'արտայայտեն կասկածուտ կտրած:

— Շնորհակալ ենք, ճանրմ, ի՞նչ տեղը կար... աղջիկներ դուք ալ ձերինները տուէք...

Օրիորդները կ'սկսին նուէրներու քատախը խաղալ սենեկին մէջ, ու քիչ մը վերջ, բոլորին ձեռքը մէկ մէկ առարկայ կը պըտորտին, ու զմայլումի, գնահատումի ժպիտներ իրարու կը յաջորդեն:

Նուէրներու քատախը այսպէս կ'անցնի կաղանդի գիշերը, քատախ մը՝ որ երեկոյթներէն շատ ու շատ տարբեր կ'ըլլայ, քանի որ մարդոց տեղ կարմրուկ ոսկիներն են, որոնք ա ճողաք, ա կոշ տեղ կը փոխեն:

Հիմա մտիկ ըրէք կարծիքները, զորս կը փոխանակուին ընտանեկան շրջանակներու մէջ, փոխան ստացուած նուէրներուն:

— Էյ մեղա՛յ... գիտես քի աղջիկս պէպէք էր, հանէին տէ շնորհքով բան մը տային սարէ...

— Գիտնայի նէ չէի առներ, պախամ թօրու մը... չօգ չէ՛յ...

— Հիչ չիտային տահա աղեկ էր... ատ պողազին շալը ի՞նչ է...

— Պէյօլլու ելած օրըս առնեմ ըսի տէ, չըլթիկ պան է տէյի պիր միւնքին ծառքս վրայ չի գնաց...

— Տարին մէյ մը նէ... Փարազա քըսան զրուէ էվէլ տային նէ ի՞նչ կ'ըլլար...

— Հիչ հապ չըրի պան տալերնին, չիւնքի գիտեմ քի պարտքով է առած հէտիյէնին...

— Հապա սուաջ մատին չափը առնէին տէ անանկ շինել տային, պողազի թասմայի խըտար լան մատնի մը... վայ մեղքիս...

Եւ այսպէս նմանօրինակ կարծիքներ, դիտողութիւններ կը տեղան ամէն անոնց հասցէին, որոնք ըստ սովորականին նուէր տալու հաճութիւնը ունեցած են իրենց սիրելիներուն:

X

Եթէ հակառակը պնդէք չեմ հաւատար: Այս օրերուն անպատճառ ձեր թաղերուն

մէջ կը հանգիպէք տօթօռներու, որոնք ժամը 18 միլ արագութեամբ փողոցները կը դառնան հեւ ի հեւ, բոլոր հրաւերներու անձամբ պատասխանելու, եւ կամ կ'որիկ մէծիտ մը գրպանելու համար:

— Բարեւ տօթօռ... խէր ըլլայ...

— Bonjour, ներեցէք գործ ունիմ...

— Ի՞նչ կայ... ո՞վ ինչ է եղեր...

— Չեմ գիտեր, բայց սա օրերուն բաւական թիւով ստոմբօսի խանգարումէն առաւպող հիւանդներ ունիմ...

— Աստուած բժշկութիւն տայ... գործըդ լմնցունես նէ մեզի ալ հանդըպէ, գէշ չըլլար...

— Bon, bon... au revoir!

Եւ իրօք այս օրերուն ամէն տունէ տըքալու մը ձայն կ'առնես, մինչ անդին դեղագործները շիմօնոս ոսփե պատրաստելէն հոգինին կ'ըլլայ:

Պատկեր մը կը բաւէ հաստատելու խօսքըս:

Բժիշկը ներս կը մտնայ սենեկէն, ուր սէտիրին քէօչէները մէկ երկու հիւանդ պառկած են:

— Ի՞նչ եղան նայինք, կը հարցնէ բժիշկը, ձեռքի էլտիվէնները հանելով:

— Սուս եղի տօթօռ սուս, կաղընտին գիշերէն պէրի է տաքութիւն ունին բիւթիւնն ալ...

— Էյ ի՞նչ եղան, պաղեցա՞ն, դպչելիք բա՞ն մը կերան...

— Քա եալլուս ի՞նչ գիտնամ, ուրախօրէն պէրի պերաննին ֆապօիքայի պէս կը պանի կոր... ի՞նչ գիտնամ...

— Էյ ի՞նչ կերան նայինք...

— Իչտէ, քէչի պույնուզի, այվա, խընծոր, նուռ, ֆընտըլս, լէպլէպի, չամիչ, ճէվիզլի սուճուխ, խուճմա, խայխի, սոնց հետ մէկտեղ ալ, մըտան ելան, անուշ ապուրին քեսսէին խաչըլս նետեցին...

— Չըսես քի եէմիչճիի խանութ են բացեր ներսիդինին, ու կ'սկսի քննել, որուն հետեւանքը կ'ըլլայ բիւռկաթիֆը:

Այսպէս, կաղանդի տութիւ առնուած պտուղները, որ սովորութիւն է օրը քսանը

չորս ժամ ուտել, կրնայ ծանր հիւանդութիւններու պատճառ ըլլալ:

Օրինակը դուք ձեր տուններու մէջ փրն-տըռեցէք կը գտնաք:

×

Այս տարի կաղանդը կիրակի օրուան հանդիպելուն, չաքաթ գիշեր, կարեւոր թաղերու Աղքատախնամ մարմինները, ըստ իրենց բարի սովորութեան՝ պտըտեցան, որպէս զի աղքատասէր ժողովուրդին սրտաբախ նուէրներով, կարող ըլլան հոգալ աղքատները, տարւոյն տասերկու ամիսներուն մէջ:

Հիմա կը կարծէք որ, ասանկ սրտառուչ պարագայ մը ինչպէ՞ս կ'ըլլայ որ զաւելտիս նիւթ կ'եղայ ...

Հիմա պիտի տեսնաք:

Յանուն աղքատաց պտըտողները, ընդհանրապէս երկու հոգի կ'ըլլան, մէկ լսպտերով, զոր բռնելու պատիւը կ'ընէ թաղին ժամկոչը, կամ զպրոցին տնտես աղբարը:

— Զա՛թ, չա՛թ ...

Վերէն վարագոյր մը կէս կը բացուի, ու բիրիւղ գլուխ մը կ'երեւայ, մինչ նոյն պահուն դուռը կը բացուի մեղմիկ:

— Աղքատախնամ, չատ տարիներու ...

— Դուրս ելաւ ... պէքէ՛յէք նէ պէլքի սահաթը վեցին մօտիկները կուգայ ...

Ուրիշ տուն մը,

— Աղքատախնամ, չատ տարիներու ...

— Ինկիլիզ մը աւրեցէք տէ հինգնոց մը վար դրէք ...

Ուրիշ տեղ մը,

— Աղքատախնամ, չատ տարիներու ...

— Քառթը ձգեցէք տէ, մենք ճուղապը կը խրկենք ...

Ուրիշ տուն մը,

— Աղքատախնամ, չատ տարիներու ...

— Մի բանաք քա՛ ...

— Քա մայրիկ, շնորհքով մարդիկներ են

— Կլոխդ ներս քաչէ, հիմա՛ կը դրոշմեմ, հա՛ ...

— Տուտու, չէյրէկ մը օլտուն տանք ...

— Անանկ են ըսեր, չէյրէկը անոնց տալու խութի մը բուտուա կ'առնեմ տէ, խա-

լայճի չամուռի սուռաթով դուրս չեմ ելար ...

Ուրիշ տուն մը,

— Աղքատախնամ, ամէն տարի բարով հասնիք ...

— (Պատասխան չկայ) ...

— Շատ տարիներու հասնիք ...

— (Պատասխան չկայ) ...

— Շնորհաւոր նոր տարի ...

Ու ներսէն բարակ ձայն մը,

— Կազը բուֆ ըրէ, քա Կիւլիւկ ...

— Քա առտու, կը պէքէ՛յէն կոր ...

— Բուֆ ըրէ կ'ըսեմ կոր քեզի, կռնակդ կը քերուի՞ կոր ...

— Բո՛ւֆ ...

Ու կազը կը մարի ներսէն, թանձր մութի մէջ ձգելով խեղճ մարդիկը, որոնք այն օդին, ցուրտին կուրծք տալով, աղքատին ողորմութիւն կը մուրան, մոռցած իրենց տան ընտանիքը:

Երբ շնորհակալութեան լայն բաժին մը կը հանենք՝ առատաձեռն նուիրատու ժողովուրդին, կան ալ որոնք տմարդի տրարքներով զգուանք կ'ազդեն, եւ կ'արատեն Գրիստոնեայ անունը, որ եթէ չեմ սխալիր, զիպուածաւ դրոշմուած է իրենց ճակտին վրայ:

×

Ամէն տարի ընտանիքներ կան, որոնք կաղանդի գիշերը գօնթռաթներ կ'ընեն իրարու, ճիշդ վարձակալներու պէս:

Պայմանագրութեան այս ձեւը երկու բանաւոր պատճառներու համար տեղի կունենայ այր եւ կնոջ միջեւ. առաջին, ալքըլա՝ մոլութենէ քաշուելու, երկրորդ՝ ծեծը վերնալու համար:

Վստահ եմ որ, կարգ մը տուններու մէջ կաղանդի գիշերին առ խօսակցութիւնը անցաւ, իրրեւ տարեգլխոյ պայմանագրութիւն, զօնթռաթ:

— Նայէ քեզի ըսեմ, անուշիկ էրիկդ, աս գիշերուընէ ըսախին պիտի ձգես ...

— Քիչ մը մոմտամ, կընիկ ...

— Մեծը պիտի վերնայ ալթըլս, քուր աղբօր պէս պիտի ըլլա՞ք հետդ:

— Ըսել է քի տահա էվէլօք պիտի ծեծ-
կուինք ...

— Չիյտեմ ավթըխ, Փիսկիէ մը չպիտի
զարնես ...

— Ատոր հա կ'ըսեմ ամա, ըռախի՞ն ...

— Չպիտի խմես ... նայէ շառթ կը դը-
նեմ կոր ...

— Հիմա նայէ քի ըսեմ, պազի սիրտս
նեղ կ'ըլլայ կը խմեմ, ուրախութիւն մը կ'ու-
նենամ կը խմեմ, քեզի խըռս ելած կ'ըլլամ
կը խմեմ ...

— Ես քեզի խըռս չպիտի հանեմ, ինչուդ
պէտք։

— Խօսք չեմ կրնար տալ, կընիկ, աս
ասանկ երթանք, նայինք նասը՛ կ'ըլլայ ...

— Արեւըդ սիրեմ էրիկս ... վազ ե-
կուր ...

— Կեցիր ես ալ պայման մը ունիմ ...

— Ըսէ հոգիս ...

— Երեսդ բուտռա չպիտի քսես ...

— Ա՛ ... աս չըլլալիք բան է ... աս
նուշըս ...

— Է՛յ, չէնէ դուն բուտռաթ քսէ, ես
ալ ըռախիս խըմեմ ... եա՛ ...


— Բուտռան քսեմ նէ որի՞ զարար ու-
նիմ քի ...

— Ըռախին խմեմ նէ ո՞վ որի ...

— Իմա զարարըդ պան է, Փախաթ
քո՞ւլդ ...

— Կայնէ քի ըսեմ ... , ես ըռախին
խմեմ նէ, խմած է տէյի ամէն մարդ քովէս
հեռու կը փախչի ... Փախաթ, դուն
բուտռան քսես նէ, բառլախ է տէյի բիւ-
թիւն էթռաֆդ կ'առնեն, իշտէ ասոր հա-
մար եկուր աս գօնթռաթէն վազ անցնինք,
կընիկ, ծարէն չաքան օղլու կ'ելլայ կոր,
ես խմեմ, դուն քսուէ քի տէնկ գանք իրա-
րու ... եա՛ ... :

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ



Կը խնդրուի մեր գաւառի բաժանորդ-
ներէն փութացնել անցեալ տարուընէ ու-
նեցած իրենց պարտքը եթէ կը փափաքին
որ թերթերու առաքումը շարունակուի։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ԹԵՐԹԻԿԸ



Խմբագրական

Տօնական օրերը հասան։ Վաղը Ծնունդ
է եւ միւս օր Մեռելոց։ Հարուստներ կան,
աղքատներ ալ կան, առաջիկները պէտք է
օգնեն երկրորդներուն եւ երկրորդները
պէտք է խնկարկութիւն ընեն առաջիկնե-
րուն։ Այն որ այս վերջին պարբերութեան
դէմ կը գործէ, անօթի կը մնայ։

Ծ. Խ. — Բան մը որ հաճելի չէ ոչ ին-
ծի, ոչ քեզի եւ ոչ ալ մեր սիրելի բարե-
կամին՝ Թօլայեանին։

Միջազգային Բրոնիկ

Օր. Մէրի Գորէլլի ամերիկայի միլիոնա-
տէրերուն վիճակին վրայ կը կարեկցի յայտ-
նելով թէ, անոնք մարդկային ամէնէն մեծ
ուրախութիւններէն զրկուած են, քանի որ
քիչ բացարձակեամբ գրեթէ ամենքն ալ ա-
մուսնութենէ կը խորչին։

Ամերիկայի միլիոնատէրը տարիքը առած
ու հիւանդ, ծառաներուն ձեռքը կիցնայ,
որոնց հոգածութիւնը անչափանդիր ըլլալէ
հեռու է։ Ուրեմն Օր. Մէրի. Վիճակէս չկա-
րեկցիլ ամերիկայի միլիոնատէրերուն վրայ,
սնապարծութեան մէջ կը սահի կեանքը, ան
ոսկիները կը ժողվէ ու ծաղիկները երեսի
վրայ կը ձգէ։ Աւելի լաւ չէ՞ ջուրով եփ-
ուած բանջարեղէն մը ուտել, անրիժ սրտի
մը սէրը վայելելով։

Ծ. Խ. — Ըսել է ամուսնացողը պէտք է
աչքը առնէ ջուրով եփուած բանջարեղէն
ուտելը։ Ստամոքսի խնդիր։

Արսաֆին

Մոռնիկ Բոսթի Ուաշինկթոնեան թըղ-
թակիցը կը գրէ. Բարձրագոյն հեղինակու-
թիւն ունեցող անձնաւորութիւն մը սա յայ-
տարարութիւնը ըրաւ, Ալէէզիրասի դես-
պանախորհուրդին մէջ Մ. Նահանգաց բա-
րոյական աշակցութիւնը պիտի հակի Անգ-
լիոյ եւ Ֆրանսայի կողմը, եւ վստահ ենք
որ իտալիա ալ մեզի պիտի միանայ, որով

Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Մ. Նա-
հանգաց այդ ընթացքին հետեւանքով Գեր-
մանիա պիտի ընկրկի: Չենք կարծեր որ
մինչեւ այն աստիճան առաջ երթայ որ երբ
Ֆրանսա դիմադրէ պատերազմը անխուսա-
փելի ըլլայ: Այսու հոնդերձ կը սպասեմ որ
Գերմանիա մինչեւ վերջին սահմանները ա-
ռաջ տանի պըրժը:

Աճէգիրասի դեսպանխորհուրդը իր ա-
ռաջին նիստը պիտի գումարէ Յուն. 17ին:

Ծ. Խ. — Երէկ ուրեմն: Ի՞նչ զուգա-
դիպութիւն Աստուած իմ, Ֆրանսայի Նա-
խարարաց Խորհուրդն ալ երէկ իսկ պիտի
կատարէր նախագահական ընտրութիւնը:

Առեւտրական

Բամպակին գինները բռնուած են: Շաբ-
թուս Իզմիրէն հասաւ 1000 պարկ: Արդէն
ունէինք 2000 պարկ, հիմայ հրապարակին
փրայ պատրաստ ապրանք կայ 3000 պարկ:

Ծ. Խ. — Աշխատելու է Զատիկը չեկած
ձեռքէ հանել:

Պատրիարքարաններ

Պուլանըգի Թէղուտ գիւղէն կը գրեն թէ՝
ամուսնական զեղծումները հետզհետէ կը
չաւանան:

Անոնք որ կին ունին կարճակէն զանոնք,
կամ երկու կին միանգամայն կը պահեն:
Տեղւոյն քահանան ինք տուեր է առաջին օ-
րինակը: Հազիւ իր երէցկիւնը կը թաղեն, կը
դառնայ տուն եւ այրի կնոջ մը հետ կը կե-
նակցի: Ուրիշ մը իր կինը կը թողու եւ ու-
րիշ աղջկան մը հետ կամուսնանայ: Մի ոմն
Միսաք, եղբորորդի Տէր Խորէնի, իր պը
սակուած կինն ու երեք զաւակները կը թո-
ղու եւ օտար երկիր գտնուող այգալ Սար-
գիսի կնոջը հետ կամուսնանայ:

Ծ. Խ. — Կ'երեւայ թէ ամուսնական
նոր օրէնք մը հաստատուեր է Պուլանըգի
մէջ:

Ներքին

Բժշկական սխալ դարմանումի մը զոհ
գնաց տարաբաղդ հայ մանկամարդ կին մը
Սկիւտարի մէջ: Տիկին Ագապի Յ. Պալթայ-
եան, 23 տարեկան, որ հազիւ թէ երեք

չարաթ առաջ տղարերք ունեցած էր, դար-
մանող բժիշկին կողմէ պէտք եղած քանա-
կութենէն աւելի սիւպլիմէ տրուած ըլ-
լալով, ահաբեկ ցաւերու մատնուեցաւ եւ
չարաչար տառապանքներու մէջ մեռաւ:

Թերթօն

Անկուտին փորձեց աշխարհի չըջանն ը-
նել քառասուն փարայով, միջոց մը կորսուած՝
ովկիանոսին վրայ, ղէպ ի մարգարիտի կըղ-
զին ուղղուեցաւ, ու չնաշխարհիկ աղա-
մանդներու գողութենէն վերջ, Մարսուէնի
միլիոններուն տիրացաւ:

Ծ. Խ. — Եթէ այս թերթօնին չէք հա-
ւատար, կարդացէք օրուան թերթերու
թերթօնները:

— Ինչո՞ւ չես խօսիր, սիրելի ամու-
սինս:

= Մինակ ըլլամ նէ կը նեղանամ
կոր կնի'կ:

— Ես մարդ չե՞մ:

= Բայց կարգուած ատեննիս «Ե-
ղիցին Երկոքեան ի մարմին մի» ըսին.
երկուքնիս մէկ չենք սեպուիր մի եա՞:

×

Երկու օրիորդներու միջեւ:

— Շիտակ ըսէ՛ սիրելիս, քանի՞ տա-
րեկան ես:

= Իրաւ որ քու տարիքդ փնտռե-
լով իմինս մոռցայ:

×

Թեթեւաբարոյ պարոն մը Զատիկի
առթիւ ոսկեզօծեալ հաւկիթ մը ներ-
կայացնելով իր սիրուհիին:

— Անհունս երախտապարտ պիտի կա-
ցուցանէք զիս, ո՞վ նազելիս, եթէ իմ
առ Ձեզ ունեցած աննկարագրելի բուռն
սիրոյս մէկ փոքր հաւաստիքն եղող
այն նուէրս ընդունիք:

— Բայց . . . «Երկուքնիդ միան-
գամայն չեմ կրնար մարսել»:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿԵՍԱՐԻԱ. — Տիվրիկի Տ. Ստեփան քահանան փերնաղուրկ եղաւ արգիլուած պտուղին համը նայելուն համար:

Ծ. Խ. Այս անգամ Ադամ չէ որ կը խափուի, այլ Եւային կամ անոր թուռնահին:

ԷՅՈՒՊ. — Երկար ատենէ ի վեր եկեղեցին գրեթէ փակ է: Կը յուսանք որ գոնէ տօնական օրերու մէջ պատարագ մը տեսնելով հոգեւորապէս կը մխիթարուինք:

Ծ. Խ. Քահանանիդ ո՛ւր է և ի՞նչ կը բանի:

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ. — Փոխան ծաղկեպսակի ուսուչաց սնտուկին ալ նուէրներ սկսան հասնիլ: Առաջին օրինակը տուաւ Սիվրի Հիսարցի մը՝ Պետրոս էֆ. Գիւլիւք Յակոբեան:

Ծ. Խ. Այդ անձին մականունը փոխելու և Պէօյիւք Յակոբեան գնելու է:

ԲԵՐԱ. Էֆթալօֆօսի կազինոյին վարիչը մեծ իրարանցումի մէջ է Խաղ Խորհրդոյ վերջերս տուած այն որոշման համար, որուն համաձայն դպրոցի և եկեղեցւոյ պաշտօնեաներուն արգիլուած է հասարակաց վայրեր ու գինետուններ յաճախելը:

Ծ. Խ. Որոշումը հիանալի. բայց կը վախցուի գինետուններու սնանկութիւններէ:

ԲԱՔԵՐԻ. — Խուփս գիւղի եկեղեցիին՝ Կէտիք-փաշայի եկեղեցիէն ունեցած կտակաբաժիններու մասին կարգադրութիւն մը կը խնդրուի, վասն զի

Կէտիք-փաշայի Թաղ. Խորհուրդը 3-4 տարիէ ի վեր չի վճարեր նոյն կտակաբաժինները:

Ծ. Խ. Կը վախնաք որ Մունճուսոյն եկեղեցւոյն տեղւոյս կալուածներուն siarouի՞ն կուգայ ձեր կտակաբաժինները:

ՊԱՆՏՐՄԱ. — Առաջ. Տեղապահ Տ. Կարապետ Վրդ. հասաւ քաղաքս և ձեռնարկեց իր պաշտօնին:

Եկեղեցականի իր հեղահամբոյր բընաւորութիւնը առաջին առթիւ լաւ տպաւորութիւն մը գործեց տեղացի ազգայիններու վրայ:

Ծ. Խ. — Կարողութիւն կը մաղթենք:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Սարգիս էֆ. Սիմէոնեան Մէրսին. — Ատանա Պօլոս էֆ. Եղեպեանի թերթերթերը զրկուեցան առաջին թիւէն: Կըսպասենք Ձեր խոստումին:

Արմենակ էֆ. Պարոնեան Պրուսա. — Ստացանք Ձեր վեցամսեայ բաժանորդագիրն: Թերթերը կը ստանաք:

Յովհաննէս էֆ. Ճէզվէճեան Զօնկուլտաք:

Ստացանք Ձեր տարեկան բաժնեդիրն:

Դարձակալութիւն Ատաբաղար. — Տեղւոյդ բաժանորդներուն մանրամասն մէկ ցուցակը հաճեցէք զրկելը՝ փոյթ:

Արժանաւոր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատտեսի, քի. 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴԻ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ չղուտ սննդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգլիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւոր բժիշկներէն: Ներմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԻԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դիզորէից միջերանոցներու քով:

50—24

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԵՐԱՅԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԷՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տոկունութեամբ և գիներու անմիջեղի աժանութեամբը չահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուատներու, կանանց բեղրիներու և տղայոց չիք և դիմացկուն ֆօսֆիւմներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ Ներմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուատի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

50—19

Խ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՊԱՐԻ ԴԱՍԱՏՈՒ

Ներկայ ձմեռուան առթիւ ընտանեկան երեկոյթներու անհրաժեշտ պարը քիչ ժամանակուան մէջ ուսանելու փափաքողը կրնան դիմել իրենց երա, ԿալթաթաՍէրայի դէմ Սիթէ տը Բերայի մէջ թիւ 11. Պոլսոյ կողմ Մեծ Շուկայ, Գալթաթաքըլարի դուռը, ֆէսճի Սեպուհ աղայի խանութը:



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՛ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու առկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա. Պ. Ա. Ռ. Ի. Կ.

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՇ ԹԻԻ 13

Անգամ մը այցելելի բաւական է համոզուելու համար թէ՛ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-15

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։